



Զահրատ

Կաղանդի գիշեր

Ամեն ինչ ծայրեն վերսկսելու
Ի վերջոյ նորեն այդպէս ըլլալու
Տօնն է այս գիշեր

Լոյսեր վառեցէք եթէ չի բաւեր
Ձեզ տաքցնելու ձեր լոյսը ներքին
Տօն է այս գիշեր

Պահ մը ամեն ինչ վերջացնելու
Ամեն ինչ ծայրեն վերսկսելու
Տօնն է այս գիշեր

Յոյսեր վառեցէք եթէ չեն բաւեր
Ձեզ տաքցնելու ձեր յոյսերը հին
Տօն է այս գիշեր

Ի վերջոյ նորեն այսպէս մնալու
Քիչ մը աւելի յուսալքութիւն
Տօնն է այս գիշեր

Երգել փորձեցէք եթէ չէք մոռցեր
Խանդոտ երգերը ձեր պարմանութեան
Տօն է այս գիշեր

Ջուր տեղ վատնուած օրերն յիշելու
Գոյութեան տխուր հաշուեկշիռին
Տօնն է այս գիշեր

Լոյսեր ու յոյսեր վառեցէք գոյն գոյն
Երգեր երգեցէք հինէն ու նորէն
Տօն է այս գիշեր
Գոյատեւելու տօնն է այս գիշեր